

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՄՇԱԿ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տարին և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Անթառամ Կարապետեան, Նշիւսաբէթ Մելքոնեան, Յովհանէս և Յակոբ Յակոբեան Զահանեանցները որտէր ցատով յայտնում են՝ առաջինը իր թանկագին ամուսնու, երկրորդը՝ իր տաղը, երրորդը ու չորրորդը իրանց սիրելի եղբոր՝

Մ Ի Ն Ա Ս Յ Ա Կ Ո Ւ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 2-ին, և ինչորոշ են ազգականներին ու ծանօթներին չնորձ բերել յուզարկատրոսթեան, որ տեղի կունենայ նոյեմբերի 5-ին, հինգշաբթի, իր բնակարանից, Նովո-Արսէնայի փողոց, տուն № 4, դէպի ս. Կարապետ եկեղեցին, և այնտեղից դէպի Ռոյալթիքը: Ամբիօքը կը լինի չորեքշաբթի, երեկոյեան ժամը 5-ին:

1—2

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անվայել հայտնաբեր և դատարկ բառեր.—Ներ-  
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոնի վիճակը.  
Նամակ Բալայանիին. Նամակ Խմբագրութեան.  
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-  
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այլառաւելի Գրանտիան.  
Նամակ Աւտորիայից. Նամակ Գերմանիայից. Ար-  
տաքին լուրեր.—ՀՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կ. Պօլսից:

ԱՆՎԱՅՆԻ ՀԱՅՈՒՄՆԱԿ ԵՒ ԴԱՏԱՐԿ ԲԱՌԵՐ

Կ. Պօլսի «Արեւելք» լրագրի մէջ կար-  
դում ենք հետեւեալ տողերը.

«Ս. Պատրիարք Հայրը տեղեկանալով որ  
Թիֆլիսի հայ թերթի մը մէջ հրատարակուած

է թէ Ազգ. Պատրիարքարանի վերաբերեալ  
ծախքերը մանուկներու յատկացուած դրամէն  
կը հողացուին, գրեց ամենայն Հայոց Ս. Հայ-  
րապետին, թէ այդ հրատարակութիւնը բացար-  
ձակ զրպարտութիւնն է անպատկառ ստույթին  
մըն է, և աւելցնելով որ աղքատ մանուկներ-  
բու ամուսն չուրիւրած դրամները իր հակա-  
դրութեան տակ գտնուած՝ մանուկներու և կա-  
րօտեալներու Մտտուկը կը ժողովն և անկէ կը  
վճարուին միմյանի մանկանոցներու ամենական-  
ները և կարօտեալներուն նպաստները, և թէ  
մանուկներու նուիրուած յետին բնիսն իսկ  
անբռնաբարելի է ու նուիրական, և չի կրնար  
ու չպիտի կրնայ գործածուիլ երբեք իր նպա-  
սակէն դուրս տարբեր բանի մը, ինչպէս Ն.  
Ս. Օծովենէն որ հաճի պաշտօնապէս հերքել  
այդ չարամիտ յերկրամբները: Թիֆլիսի «Հայ  
թերթը» «Մշակն» է, որի

անունը, ինչպէս յայտնի է, Կ. Պօլսում  
ամենքին արգելաւձ է արտասանել, բայց  
թիւրքաց կառավարութեան նուիրված  
«Բիւզանդին» լրագրից, և ուրեմն «Մշա-  
կին» են ուղղված Կ. Պօլսի հայոց պաշ-  
տօնական պետի՝ Մաղաքիա արքեպիս-  
կոպոս Օրմանեանի այնպիսի սիրուն բա-  
ռերը՝ ինչպէս են բացարձակ զրպարտու-  
թիւն, «անպատկառ ստույթին», «չարա-  
միտ յերկրամբներ», և գուցէ ուրիշ շատ  
այդպիսի անվայել դարձուածքներ, որոնք  
չեն յիշատակված Կ. Պօլսի լրագրի չազգայն  
լուրերով» մէջ:

Փաստը, անկասկած, յիշում են ընթեր-  
ցողները.—«Մշակ» Կ. Պօլսի թղթակիցը  
մեծ կսկիծով յայտարարեց, որ Կ. Պօլսի  
հայոց պատրիարքարանը որբերի օգտին  
հաւաքված փողերից պատրիարքարանի  
պաշտօնեաներին ուժիկ է տուել: Իսկ շատ  
ամիսներ առաջ էր: Նոյն փաստը հաղորդ-  
վեց, նոյնպէս մեծ զարմանքով և վշտով,  
և երօպական մի քանի լրագրերի մէջ, և  
մեզ համար շատ ծանր էր, որ ամբողջ  
6—7 ամիսների ընթացքում Կ. Պօլսի  
հայոց պաշտօնական պատրիարքը չը կարողա-  
յաւ, կամ երկիւղ կրեց մի խօսք առել  
այդ ծանր մեղադրանքի դէմ, և մաքրել  
իրան մի այնպիսի յանցանքից, ինչպէս է  
գիւղէ մանուկների հայր և... առաջ գցել:  
Եւ ահա այժմ միայն, այսօր ամիսներ  
անցնելուց յետոյ, հրապարակ է գալիս Օր-  
մանեան պատրիարքը՝ հերքելու ծանր  
մեղադրանքը: Ուշ է, այո, բայց աւելի  
լաւ է ուշ, քան երբեք...

Մենք,—խոստովանում ենք անկեղծօրէն,  
—առաջինը կը տպագրէինք ամեն մի հեր-  
քում, ամեն մի փաստական բացատրու-  
թիւն, որովհետեւ ինչքան էլ շատ վատ  
կարծիք ունենանք Կ. Պօլսի պաշտօն-  
ական պատրիարքի և նրա խորհրդականների մա-

սին, այնուամենայնիւ չէինք ցանկանայ,  
որ հայոց մի պատասխանատու հիմնարկու-  
թիւն, ինչպէս է պատրիարքարանը, խայ-  
տառակվի ամբողջ ազգի առաջ և նոյն  
իսկ եւրօպայում նրանով, որ որբերի փո-  
ղերը իր ծառայողներին է տալիս... Բայց  
ո՞ր է այդ «հերքումը»: Հերքման  
փոխարէն մեզ տալիս են անվայել դար-  
ձուածքների և հայհոյանքների մի շա-  
րուածք, մոռանալով որ թիւթ որ և է վարձ-  
կան «Բիւզանդին» իրան թոյլ է տալիս  
ցելի չարտել ամեն մի մաքրութեան դէմ,  
այդ դեռ չի նշանակում, որ նոյն զէնքով  
պիտի կուսի մի ազգային պաշտօնական  
հիմնարկութիւն, որը պարտաւոր է բարձր  
պահել իր գիրքն ու պատիւը...

Պատրիարքի յանցանքը կրկնապատկ-  
վում է նրանով, որ հայհոյանքներից յե-  
տոյ չեն գալիս փաստեր և թւեր, դօկու-  
մենտներ և ապացոյցներ, այլ լոկ հռօմի  
պապի մեծամտութեամբ ներշնչված դա-  
տարկ ֆրազներ՝ թէ ամեն ինչ կարգին է  
և կանոնաւոր, թէ ոչ մի դուռ չի կոր-  
րել... Ո՞վ հաւատաց: Ո՞վ է այնքան միա-  
միտ և երեսայ, որ նշանակութիւն տայ  
այդ տեսակ բառերին, որոնց մէջ ամեն  
ինչ կայ, բայց մտքից և ապացոյցներից  
Այդպիսի ֆրազներից կազմված հեր-  
քումներ շատ են տպագրել և ուրիշ  
հիմնարկութիւններ, ուր փողերը կշա-  
վում են ձեռնածուներին յատուկ արա-  
գութեամբ, բայց և այնպէս ամբողջ աղ-  
գը մնաց այն համոզման մէջ, թէ նրանց դո-  
լութիւններն ու զեղծումները անվերջ են...

Անվայել հայհոյանքներ և դատարկ բա-  
ռերը հերքում չէ. դա չի կարող վերա-  
կանգնել պատրաժ մտքերը, և միայն ժը-  
պիտ կարող է յարուցանել, ինչքան էլ  
պաշտօնական ձև ունենայ...

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### Կ. ՊՈԼՍԻՑ

Վիլհելմ II-ի երկու պատասխանները.—Թուրք թեր-  
թերու հրատարակութիւնները.—Այսբեկական նուէր-  
ները.—Փուշաւ և Ռըքան փաշաները.—Երուսաղէմէն  
տեղեկութիւններ.—Արեւմտեղեկայն մէջ ձեռքակա-  
լութիւններ.—Le Droit du Croissant.—Քիչնէք-  
փաշայի մէջ յայտաբերը Սուլթանի մէջ:

Կ. Պօլսի, հոկտեմբերի 19-ին

Գերմանիոյ կայսրն, ի պատասխան այն ու-  
ղերձին՝ զոր մատուց գերման դաղթականու-  
թիւնը, հետեւեալ խօսած է.

«Գերմանական պետութեան քաղաքականու-  
թիւնը՝ Արեւելքի մէջ, օրհնութեանց աղբիւր մէ  
այն գերմանացիներուն համար, որ Պօլսի կը  
գտնուին: Ես շատ ուրախ կը լինիմ, եթէ դուք,  
ձեր այդ նպատակը կացութեան մէջ, օգտը-  
ւոր այն քաղաքականութեանն է այնպիսի տեղ  
մը բռնէք այս երկրին մէջ, որ պատիւ բերէ  
Գերմանիայի: Ես, իմովսման, ամեն կարելին  
պիտի ընեմ՝ ձեր շահերը պաշտպանելու համար:  
Երբ Վիլհելմին ներկայացան Զուլցեբերգի-  
ները, որ մայրաքաղաքին մէջ գերմանական  
պաշտպանութեան ներքն են, կայսրը հետեւալ  
խօսքերն արտասանեց.

«Շատ գոհ մնացի այն ընդունելութենէն՝ զոր  
գտայ այս տեղ: Թուրքիայի նկատմամբ իմ ու-  
նեցած քաղաքական ուղղութիւնն այն է, որուն  
հետեւեալ նաեւ իմ պաշտ և այժմ կը վայելեմ  
անոր պտուղները: Իմ և սուլթանի միջև գոյա-  
ցած յարաբերութեանց հանգամանքն ինքնին  
կատարելապէս ցոյց կուտայ, թէ այս երկու  
ազգերը, թէպէտ ցեղով և կրօնքով տարբեր,  
մինչև որ աստիճան կրնան սիրով և բարեկա-  
մտութեամբ վարուել իրարու հետ և իրենց անձը  
պատրաստակամ նուիրել փոխադարձաբար մէկ-  
մէկու օգնելու:

Տաճկ պաշտօնական թերթերը՝ մայրաքաղա-  
քիս թուրքերու միտքէն հեռացնելու համար այն  
կանխածնները, որ Վիլհելմի այս երկրորդ այցե-  
լութեան պատճառաւ յառաջ եկած էին, զանա-  
զան հրատարակութիւններ ըրին. «Սուլթան Սը-  
դիւլ-Համիդ, ըսած էր «Սէրվէթ» պալատի  
պաշտօնական մէկ թերթը, երբ իմացաւ, որ  
Գերմանիոյ կայսրը փափագ կը յայտնէ Պալես-  
տին այցելել, ինքն ալ յորդորեց բաւան կերպով,  
որ մտադրութեանն է ես չը կենայ: Ուրեմն Վիլ-  
հելմ II Պալեստին գնաց իբրեւ մեր Օգոստոսիան  
սուլթանին պատուական մէկ հիւրը: Նորին  
կայսերական վեհախառնութիւն՝ սուլթան, ըս-  
տաւորապէս է, որ իր վեհապետ հիւրն այս այ-  
ցելութեամբ բնաւ որ և է քաղաքական նպա-  
տակ մը չունի, մասնաւոր թէ Վիլհելմ II նո-  
րադոյն ապացոյց մը տուաւ, հանդիմ գերմա-  
նական զօրքերը Կրետէին դուրս՝ հաստատելու  
համար, հանդէպ միւս պետութեանց, թէ ինքը  
կը ծանալէ մեր Օգոստոսիան սուլթանին վեհա-  
պետական իրաւունքները: Վերին թէ այս հրա-  
տարակութեանց առթիւ էր, որ թուրք ֆանա-  
տիկոսութիւնը իր «պին հաշմանքներու ծայրերը  
խառնեց գերմանական «հուրբա»-ներուն՝ ի  
պատիւ Վիլհելմ կայսրի, որ շատ զուարթ էր ի  
տես այն փաստաւորութեանց:

Սուլթանին կողմէ Վիլհելմ կայսրն ու կայս-  
րուհին նուիրուած առարկաներուն մէջ շատ  
հիանալի է այն զարթոնցիվ ժամացոյցն՝ զար-  
դարեւած մանրանկարով մը, որ Աւուստա-  
Վիկտորիա կայսրուհին կը ներկայացնէ: Այդ  
մանրանկարը շողակներով շրջապատուած է, ո-  
րոց մէջ մի հատը 500 օսմանուկի (11,500 ֆը-  
րանկ) արժողութիւն ունի: Ամբողջ ժամացոյցը  
40,000 ֆրանկէն աւելի կարծէ: Հիւանալի են  
նաեւ զոյգ մը եռասունեան աշտանակները՝ հա-  
մակ ձոյլ ոսկի և աղամանակաւու, զոր երկու  
հայ արուեստագէտներ շինած են՝ արեւելեան  
ճաշակով: Իսկ ոսկով և արծաթով բանուած  
ճաշակայն և մետաքսեայ զանազան կերպանքներ,  
որը նուիրուեցան կայսրն ու կայսրուհին, ան-

նկարագրելի են: Ուր թողուք այն սքանչազեղ  
ապարօշը՝ երկու միլիոն ֆրանկի արժողու-  
թեամբ՝ զոր նուիրեց սուլթանը կայսրուհին և  
հնադարեան սուրբ՝ աղամանակաւու, որ տըր-  
ւեցաւ Վիլհելմ II-ին Պաշտօնական տեղեր մըտ-  
նող երեսդ ֆրանսացի մը, որ աչքովը տեսած  
էր բոլոր այս առարկաները և ուրիշ ասոնց  
նման շատեր՝ Վը ցաւիմ որ—կըսէ—գոնէ ութ  
օրուան համար՝ Գերմանիայի կայսր չեմ եղած:  
Այն ընծաները՝ զոր Տետոն կայսրն իր հետ պի-  
տի տանի, եթէ իմ լինէին, այնչափ մեծ հա-  
րստութիւն մը պիտի կազմէին, որ ծերութեանս  
օրերուն մէջ լորդի պէս կրնայի ապրել... ինչ  
ընեմ որ... ոչ գերմանացի եմ, ոչ ալ կայսր:

Վիլհելմ կայսրն ու կայսրուհին մայրաքա-  
ղաքէն մեկնելէն յետոյ՝ կառավարական մեծ  
պաշտօնեաներուն զեղծումներն սկսան յերկան  
գալ և խօսուել հրապարակի վրայ: Հետեւեալ  
մասնազգէպը բաւական է նոյնը մը տալու այդ  
պաշտօնեաներու տխուր նկարագրին:

Մայրաքաղաքին մէջ չի կայ մէկն, որ չի  
ճանչէ Միւլլերի Ֆուադ-փաշան, որ զրկեալնե-  
րու իբրեւ պաշտպան այնքան յառաջ կերթայ,  
որ կարծես թէ աշխարհն ինքը պիտի չուկէ:  
Քիչ թէ շատ խղճի տէր պաշտօնեաներն ակ-  
նածանօք կը վարուին հետը, իսկ թշնամիները,  
որ բազմաթիւ են՝ Գէլի-Ֆուադ (Թէնթ-  
Ֆուադ) անունը կուտան անոր: Այս մարդը երբ  
իմացել է, որ քաղաքացիան Բըզլան-փաշա,  
զիւստը յափշտակիչ պաշտօնեան՝ զոր ունի  
խալմներու խալիֆան, իսկուծանք ու սուղ դաշ-  
նակիր մը կրնար է՝ Գերմանիոյ կայսր մայրա-  
քաղաքը գալուն առթիւ շինուելիք մեծ պողո-  
տաններուն համար, միտքը դրեր է որ՝ հրապա-  
րակա խայտառակէ զինքը՝ ըրած զեղծումներն  
երեսին դարձնելով—Վերին թէ ուրիշ մէկը, նոյն  
պողտանները յատակելու համար, մէկ քառա-  
կուսի մէջ թոյն 35 դահեկանի, այսինքն, գրեթէ  
2 1/2 ռուբլի վրան առնել էր, բայց Բըզլան-  
փաշա նկատելով, որ այդչափ աման յանձնա-  
ռութիւն մը իր փորը չի կշտացներ, զայն մեր-

ժեր և ուրիշ մը հետ դաշնագրութեան մտեր է  
ըստ օրինի՝ մէջ թոյն 48 դահեկանի (3 1/2 ռուբլի):  
Ֆուադ-փաշա իր ուղղամտութեամբ, չը հաւա-  
րեթելով այս անարդարութեան դէմ, սէլամըլը-  
բի օրուան (ուրբաթի աղօթք) հանդէսէն օգուտ  
քաղել, և նոյն օրը, հրապարակաւ, քաղաքա-  
պետին երեսին զարկել է՝ ըրած բոլոր անիրա-  
ւութիւններն ու զեղծումներն: Այս առթիւ,  
նոյն սէլամըլը-բի արարողութեան ատեն,  
հրապարակաւ, գրեթէ սուլթանին ներկայու-  
թեանը՝ ստուկալ տեսարան մը կը պարզուի,  
որուն դեբասաններն են Ֆուադ և Բըզլան  
փաշաները: Ամեն ոք հեռու կեցած կը դիտէ  
ու կը լսէ այն խել մը անվայել ու անբարոյա-  
կան հայհոյութիւնները, որ կը բացազանչուին ի  
գոհունակութիւն ներկայ հանդիսականաց, վառն  
զի Բըզլան-փաշան ալ, սուլթանին միւս հա-  
ճախատարներուն պէս, ունի իր քաղաքի  
թշնամիները: Բայց, սակայն, իբրեւ ճարտիկ  
մարդ, Ֆուադ-փաշայի կրակոտ բերնէն դուրս  
պօռկված բոլոր հայհոյութիւնները կլլելով, զը-  
լուրը կտրած, կանգնել կը քալէ իր սովորական  
ոճով, առանց բաւ մը իսկ պատասխանելու:  
Գայթակղութիւնը մեծ եղեր և սուլթանը լսելով  
այս ամենը՝ սաստիկ նեղացել է:

Երուսաղէմէն առնուած տեղեկութեանց նախ-  
ով Վիլհելմ կայսրն այս պահուս Երեւով կը  
գտնուի, իսկ կայսրուհին՝ կայսրն կողմանէ,  
կայցելէ բոլոր գերմանական հաստատութիւն-  
ները: Բնականաբար Վիլհելմ II, այս առաւօտ  
մեկնած է՝ Երեւով երթալու համար, Ս. Փրկիչ  
գերմանական եկեղեցւոյն հանդիսաւոր բացման  
հանդէսը՝ որ այս առաւօտ, ժամը 10-ին պիտի  
կատարուէր, աւարտելէն յետոյ: Կըսուի թէ  
քաղաքին մէջ մեծ ոգեւորութիւն կը տրէ, յաղ-  
թական կամարներ շինուած են, բոլոր պաշտօ-  
նաւորները շքեղ կերպով զարդարուած են.  
Գերման հանդիսատեսներն այնքան շատցել են  
Երուսաղէմի մէջ, որ հաշուի չեն դառ եղեր:



# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՎԻՃԱԿԸ

Հայոց թատրոնի վիճակը մեր հասարակութեան համար կարևոր մի հարց է և պէտք է լինի: Ի՞նչ էր նրա վիճակը, ի՞նչ է նա այժմ և ի՞նչ միջոցներով պէտք է բարելավել նրան: Ահա հարցեր, որոնք պէտք է դրանք մեր մամուլի ուշադրությունը: Մենք կուզենք միայն մի քանի խօսք ասել վերջին հարցի, այն է՝ հայոց թատրոնի բարելավման մասին:

Թատրոնի գաղափարը մեր ժողովրդի մէջ շատ նեղ ծաւալ ունի: Պէտք է ձգտել, որ այդ գաղափարն օր օրի վրա լայնանայ, ընդարձակվի և առաջադիմի, ուստի անհրաժեշտ է մեր ամենաէական խնդիրներէ մէկը դարձնել՝ որք միապաշտ թատրոնական գործը, ի նկատի ունենալով, որ թատրոնը կրթիչ մի հաստատութիւն է, որի բնական կարելի է լինի մայրենի բարձրագույն հայոց այսօր նա ընկած, համարեա մեռած դրութեան մէջ է: Եւ եթէ երկար շարունակվի այս «չինչ» չանելու վիճակը, նա աւելի ևս կը յետադիմէ և բոլորովին արժատախիլ կը լինի:

Մենք առհասարակ խոստովանում ենք. պահանջում ենք, որ հայոց հասարակութիւնը բազմակողմանի կերպով նպաստէ թատրոնական գործին, օժանդակ հանդիսանայ նրան: Բայց իրաւունք ունենք արդեօք պահանջելու այդպիսի բնի հասարակութիւնից, արդեօք թատրոնը տալիս է նրան որ և է բաւարար դուրսնութիւն, որ և է հոգեկան բաւականութիւն, որպէս զի հասարակութիւնը նպատակ նրան Մենք կասենք՝ ոչ: Ով էլ որ յաճախում է հայոց թատրոն՝ այսպէս ասած «ազդասիրաբար» է անում այդ. էական բաւականութիւն հասարակութիւնը չէ տալիս: 8—10 տարիների ընթացքում հասարակութիւնը տեսնում է հայոց բեմի վրա նոյն Արեւելաներին, Պետրոսներին, Յարութիւններին, Տէր-Ռաֆայէլներին, Զարեմներին, Մելիքեաններին և այլն, որոնք բացի մի երկուսից, այնքան էլ զգալի առաջադիմութիւն չեն ցոյց տալիս: Բացի դրանից՝ նոյն մարդկանց համարեա նոյն դերերի մէջ ենք տեսնում միշտ նոյն ձևով խաղալիս: Իսկ այս, խոստովանվեցէ՛ք, որ այնքան էլ դրախդ չէ կարող լինել մեր հասարակութեան համար: Ճշմարիտ է, երբեմն մարդիկ խոնարհ, լցնում են թատրոնը՝ երբ որ և է նոր գրութիւն է ներկայացվում, կամ որ և է նոր դերասան դերակոչ և տալիս. մի փաստ, որ ցոյց է տալիս, թէ կարելի է մեր հասարակութիւնը դրաւել զգալի թատրոն:

Բազում մի խումբ երիտասարդներ, այդ նըպատակով, չեն խնայում իրանց միջոցները և

հայոց բեմի են պահում մշտական դերասանական խմբով: Բայց միայն փողի մէջ չէ ամբողջ գործը, և նրա աջողութիւնը միայն փողից չէ կախված. փողով թերեւ մի քանի տարի կարելի է կիսակենդան բարձր տալ հայոց ներկայացումները միայն Բազում, իսկ այնուհետեւ: Բայց մեզանից այդ չէ պահանջվում: Պէտք է կենդանացնել, պէտք է իր սեփական ոտներ վրա դնել հայոց թատրոնը, գործը խելացի հիմքերի վրա հաստատել:

Խելացի հիմքեր ասելով, մենք հասկանում ենք հետևեալը. 1. Գործը ղեկավարող մարմինը աշող ընտրութիւն և լուրջ վերաբերմունք զէպի ձեռնարկութիւն: 2. Բէմադրութիւն և նրա օգնականի բարեխիղճ ընտրութիւն և 3. Վանդաւոր բեմադրողներ կամ զարգացած և հասկացող ընդհանուրներ: Բացառելով այս կէտերը առանձին առանձին:

Ի. Թատրոնական գործը վարող մարմինը 80-ական թվականներին հայերս ունէինք մի շատ աշող խումբ. Արամեան, Մնակեան, Մանգիւնեան, Ասլանեան, Քուրեան, Հրաչեայ, Աստղիկ, Գարագաշեաններ և այլն, — ահա դրանցից էր կազմված խումբը: Ներկայացումները դրաւում էին մեծ հասարակութիւն, կապում էին ժողովուրդը հայոց բեմի հետ, ազդում էին մարդկանց զգացմունքներին և նոյն իսկ լեզուի վրա... Բայց այդ բոլորը ժամանակակից կերպով: Ինչո՞ւ: Որովհետեւ մի խելացի, լաւ կազմակերպված մարմին չը կար, որ հներ, մեռնողներին, հեռացողներին տեղ նոր ոչ ժողովուրդ, դուրս բաշէր նոր և թաքն ոյժերը անյայտութեան զբերից և բեմ դուրս բերէր, ապաւերէր տար նըրանց: Պակասում էր մի այդպիսի մարմին և այդ պատճառով էլ, երբ եղած ոյժերը ցրվեցին, մի քանիսը մեռան, միւսները ծնւած նիւթական պայմաններից՝ թողին բեմը, նրանց տեղը բռնող չեղաւ... Անցեալ օրինակից պէտք է օգտվել: Պէտք է գտնել այժմ ունենալ մի այնպիսի մարմին, որը լրջօրէն վերաբերվէր զէպի գործը և ոչ իբրեւ զարգացման նայէր նրա վրա: Այդ մարմինը պարտքը պէտք է լինի՝ նոր գրութիւններ ձեռք բերել, նոր թարգմանութիւններ յանձնարարել՝ որոշ վարձատրութիւնով: Նա պէտք է իր «աչքերը» չորս բաց անի, որ դաւանները եկած սիրողների մասին գրված բեմադրողներից օգտվի՝ նոր ոյժեր դրաւելու համար: Հինց որ որ և է սիրողի համար լաւ բեմադրողներ են տալիս՝ այդ ղեկավարող մարմինը պէտք է հրաւիրէ նրան դերակոչ տալու, իր բեմի գիրքն առնելու: Նա պէտք է նիւթական օգնի ապագայ խոստացող՝ դրամատիկական գործը ուսումնասիրող ոյժերին: Ահա, օրինակ, մի երիտասարդ, Գալֆայեան, Պարիզում

սովորում է դերասանական գործը և նրա մասին նպատակաւոր բեմադրումներ են երևում Ֆրանսիական լրագրողներում: Գալֆայեան դիմում է Բազուի թատրոնական մարմնին և 10 րոպէի ամսական նպաստ խնդրում. նրան մերժում են: Սա թատրոնի գործին նպաստել չէ, այլ, մեր կարծիքով, նրան հարուստեղ է:

II. Բեմադրողները ու օգնականները պէտք է ընտրվեն թատրոնական գործերը շատ լաւ հասկացող, նրանով բարեխիղճաբար զբաղված, օրինաւոր ընտրութիւն տէր ու ու խաղաղասէր անձերից: Բեմադրող և նրա օգնականները պէտք է առաջնորդեն, ընդադատեն և սովորեցնեն դերասաններին պէտք եղած զէպերում: Այդ պատճառով նրանք լաւ կրթութիւն ստացած, թատրոնական գործը և բեմական գրականութիւնը լաւ ուսումնասիրած ու դերասանների կողմից յարգված մարդիկ պէտք է լինեն: Հաւանական զէպերում նրանք միայն կը վնասեն, կը փչանեն գործը:

III. Անպատճառ թատրոնական գործը պէտք է ունենայ բեմադրողներ: Մասնաւոր պէտք է աշակցէ բեմադրողներ ունենալու գործում: Բեմադրողն է, որ ընդհանուր է թէ պիտիները և թէ դերասանների խաղը: Նա է, որ արձագանք է տալիս հասարակական կարծիքին: Նա է, որ իր գրութիւններով յաճախ աւելի է կապում հասարակութիւնը բեմի հետ, ուղղութիւն է տալիս դերասաններին և նոյն իսկ բեմաստիւնը ու թատրոնական մարմինը: Նրա աչքում մեծ նշանակութիւնը բարոյական պարտք է դնում հայոց մամուլի վրա առաջին պատճառներ բեմադրողն չը նշանակել, այլ խիստ ընտրութիւն անել:

Եթէ այս երեք պայմանները կատարվեն բարեխիղճօրէն, մենք համոզւած ենք, որ հայոց թատրոնական գործը նախ՝ Բազուի մէջ հաստատ չիմքեր կը բռնի, ինքն իր ուժերով կը պահպանի իր գոյութիւնը և չի դառնայ որ և է բարեգործ և կ'ան ձեռնարկութիւն, ինչպէս այժմ է, և երկրորդ՝ նա ճիշդ կը զգի նաև մեր գաւառներում: Այդ երեք պայմանները պահպանելով՝ կարելի կը լինի Քիֆիստով կամ Բազում պահող զիստաւոր բեմը դարձնել մի տեսակ զարգաց, մի չկոչ, որի մէջ կառավարան նոր ուժեր և կը բարձրացնեն մեր ընկած թատրոնը: Առանց այդ պայմանների մեր կարծիքով, նոյն իսկ Բազում, որ մեծ փողեր են ծախվում, թատրոնական գործը մի բանի տարի կաղաղով կապրի և կարժանանայ Քիֆիստի բեմի օրին, այսինքն կը մեռնի:

Ն. Արաքսեան

Տակաւին յայտնի չէ եղեր, որ Վիլհելմ կայսրը Հայոց վանքն ալ պիտի բարեհաճի այցելել իբրեւ հայասեր մի կայսր (2):

Իւրաւոր գերմանացի ու թուրք ծպտեալ ոստիկաններ կը վխտան եղեր փողոցներուն ու քաղաքին շուկաներուն մէջ: Վրտուի, թէ բաւական մարդիկ ալ ձերբակալուել են՝ իբրեւ կասկածելի: Բարեբախտաբար հայերը քիչ են այնտեղ:

Ստոյգ աղբիւրը կը տեղեկանաւոր՝ որ անարխիստ խաղաղ մը կը փնտռուի եղեր. Սրուստղէմի մէջ, բայց մինչև ցարդ չէ գտնուել: Իբրեւ թէ այդ խաղաղիկն նախաձեռն մը գրկուած է Ներպատուէն և վնասակար նկատուել: Այս պատճառաւ շատ ձերբակալութիւններ ալ եղեր են Ներպատուի մէջ:

Ամսոյ 3/15, Ալեքսանդրիայի մէջ (Ներպատու), խաղաղական հիւպատոսը, տեղական բոլորներու օժանդակութեամբ, Մուսարբէմ-բէկ անուն թուրքի մը տունը մտնել է, ուր, կը կասկածի եղեր՝ թէ ան արխիստն էր կամ: Եւ արդարեւ կասկածը կիրականանայ, և նոյն տան մէջ կը գրտնէ պայթուցիկ երկու ուռմբ և անարխիստական շատ մը թերթեր:

Նոյն գիշերը մէկ քանի կասկածելի մարդիկ ձերբակալուել և բանտ նետուել են: Գտնուած ուռմբերն յանձնուելով հանրաձայնօք բիմադէտ-դեղագործ դոկտոր Լէօնարդօ Քիարայի՝ անմիջապէս ի ներկայութեան դոկտոր Մոյնի՝ որ նոյնպէս հռչակաւոր բիմադէտ-դեղագործ մէ եղեր, տարրալուծուել և ապացուցուել է, որ իշխեալ պայթուցիկներուն իւրաքանչիւրն իր մէջ կը պարունակէ եղեր 60 փամփուշտ և 1200 գրամ շանթաւ—սնդիկ (fulminate de mercure): Այս տարրալուծման ներկայ գտնուել են նաև Կոլ Հարրիսֆորդ-բէկ, ասպետ պ. Բիւրդէզ, մայեօր Տրէվլս և չրհանկիրներու հրամանատարը:

Այս վերջին օրերս հրատարակուել է «Le droit du Croissant» (Տաճկաստանի կանոնը) ամսուհի գրքով մը, որ չափազանց ջատագովու-

թիւն մէ եղեր Քիւրքիայի, անոր հիմնական օրէնքներուն և կառավարութեան պաշտօնեաներուն, որոց զլուխը կը գտնուի եղեր սուլթանը: Մենք տակաւին զօրադրութիւնը չունեցանք տեսնելու այդ հրէշալի գիրքը, որուն հեղինակն է, բարեբաղաւար, պ. Հանս Բարթ անուն դերմանացի մը, սակայն Ֆրանսոսներն թերթ մը անոր մասին հրատարակել էր հետեւեալ ընդհանրական մէկ յօդուածը՝ զոր համաօտելով կը ծանօթացնեմք «Մշակի» ընթերցողներուն:

«Այդ գիրքը կարգաւոր—կըսէ յօդուածագիրը—առջի բերան մարդ ինքեներն կը հարցունէ, թէ արդեօք գիրքին հեղինակը խաղի եղեր է թուրքերուն հետ՝ խելագարելով ճշմարտութիւնը, մինչդեռ վերջին տարիներու մէջ գործադրուած զարեւի իրողութիւնները մարդ քանի իր միտքը բերէ, բուռն զարթոյթ մը կը զգայ սիրտին մէջ: Սակայն եթէ քիչ մը խորհի՝ խելագար կը գտնէ այն շարժառիթը, որուն առջև զլուխ ծածած է հեղինակը, և անմիջապէս վերադառնալու կը լինի, թէ այդ գիրքը գրուած է՝ ոչ թէ եւրօպացիներուն հասկացողութեամբ, այլ միայն՝ թուրքերուն ճանաչելու համար՝ թէ աշխարհիս վրա գրեթե պաշտպանող և իրենց բարեկամ եղող՝ իսկ Վիլհելմ կայսրը հպատակներն են, մանաւանդ որ գրքին ալ ճիշդ ժամանակին հրապարակ եղած է:

Հեղինակը մեղադրել է Անգղիային՝ որ ձեռքի տակէ գրգռելով Հայաստանն ու Վրտեն, լուրի մնջիկ ուժերով խաչակրութիւն մը հանել է օսմաներուն հետ՝ խելագարելով ճշմարտութիւնը: Կը յաւելու յարգող յօդուածագիրը—կատարելապէս ճշմարիտ և հեղինակին աշխատութիւններն ալ իրաւամբ գովութեան արժանի կրնային լինել, եթէ մարդ ներքնապէս չի զգար՝ թէ այդ խօսքերուն մէջ պարզապէս հայի խնդիր (question de boutique) կայ, և թէ՛ հեղինակը կը յարձակի անգղիացիներուն վրայ ան պատճառաւ, որ ասոնց քաղաքականութիւնն Արեւելքի մէջ դերմանացի շահերուն դէմ կը կանգնի:

Գիրքին երկրորդ մասին մէջ պ. Հանս Բարթ

եռանդուն ներողեան մը կարդացել է Արդիւ-Համիլի վրայ, որ իր կարծիքով, մինչև հիմա նմանը չի տեսնուած մեծ խաղիկ մը և միանգամայն պարձանքն է եղեր բոլոր իսլամներուն: Այսինքն զոյգ մը մարգարիտ՝ հազարներու մէջ: «Եթէ, բերէ այդ գերմանացի ջատագովը—Քիւրքիան մինչև հիմա կանգուի կը մնայ՝ առաջինէն աւելի հօգու ու զօրաւոր (2) և իբրեւ չինարար մի պետութիւն, որ յարգանք միայն կը ներշնչէ (3), այդ բանը նախապէս և առանց որ և է կասկածի, Արդիւ-Համիլի II-ի կը պարտի... Արդիւ-Համիլի՝ բարձր հանձարի տէր, մէկ նայաւածքով ամեն բան հասկցող, ոգով զինապաշտ (ան, այն, ինչ բնէ), և այսու հանդերձ, ներող, բարեհաճաբար (խօսք չուզէր), վեհանք և միջ զօրութիւն մը... իր անվիճելի հանգամանքներով, հանձարով ու իմաստութեամբ՝ արևմտեան արդի մեծամեծ մէկ վեհապետն է:

Եւ յօդուածագիրը կըսէ՝ «Հիմա հասկողեցան... այդ գիրքն ուրեմն փաստաբանական ճառ մը՝ pro domo մէջ: Գերմանացի ջատագովը՝ իր այդ զլուխ-գործողին մէջ յայտարարել է որ, եթէ Բարձրեղունը չիտնայ ու Գերմանիոյ կայսեր իմաստութիւնը վրայ չի հանելին՝ օսմաներուն պետութիւնը պիտի քայքայուի եղեր... և յետոյ—«բերանի թէ պատուական օսմանցիներն իրենց զանապէս տնտեսութիւնն ալ կարգի կանոնի դրած լինէին Գերմանիայի գործակցութեամբ:

Ահա այս է եղեր պ. Հանս Բարթի միակ ցան ու մտահոգութիւն... Parbleu!!!...

Անգղիացի պաշտօնատար մը՝ Օմդուրմանի պատերազմին նախընթաց օրը, յաջողել է ձեռք անցունել պատճէնն ան նախակին, զոր սէրդար Բիշնէր-փաշա ուղղել էր Սուլթանի խալիֆ Մուհամմէդ-է-Տաալիի որդեգր՝ Ապդուլլահին, պահանջելով, որ իր իշխանութեան ներքեւ զտնուող ձեր, կին ու տղայ՝ քաղաքէն դուրս հանէ, աղատելու համար զանոնք թողանոյներու ուռմբերէն: Այս դոկումէնտը, որ արաբերէն գրուած

ՆԱՄԱԿ ԲԱԼԱՍՆԵՒԻՑ

Հոկտեմբերի 30-ին

Անգլիական ընկերութիւնների մուտքը մեր երկիրը՝ նախապէս հոգիւր ձեռք բերելու և շահագործելու նպատակով, ինչպէս մեր թղթակցութիւններից մէկի մէջ էլ («Մշակ» № 104) արդէն ասել էինք՝ այնպիսի մի խոշոր երևոյթ էր մեր աւետարական կեանքի պատմութեան մէջ, որ չէր կարող անուշադիր մնալ: Մեր նըշանաւոր նախադրիւնաբերողներից շատերը (Քաղիկ, Նիքայի, Արաֆիկով և ընդ., եղբ. Բուդաղեաններ, Մատուրով, Գէ-Ռուր, «Մասիս» ընդ.) սկսեցին վաճառել իրանց նախաձեռնութեամբ, համարեա թէ բոլորն էլ մէկ մէկու նպատակ և հաղիւ թէ գտնվէր գտնէ մի ֆիրմա, որ այդ պատով վարակված՝ իր նախաձեռնութեամբ վաճառելու փորձն արած չը լինէր: Երկար ժամանակ ամեն տեղ ատվում, խօսվում էր միմիայն այդ հարցի մասին. և այն ճանգամները, որ արդիւնաբերութեան այդպիսի մի խոշոր աղբիւր ընկնում էր օտարների ձեռքը, առիթ տուեց շատ տարակուսանքների: Մասնաւորապէս այդ երևոյթը շատ անախորժ էր ծառայող դատակարար համար, որը այդ ժամանակ միայն սկսեց լուրջ կերպով մտածել իր թշուառ վիճակի մասին: Երկու ծառայող միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբունքով, որ զարգացած և կրթված մարդիկ, ինչպէս անգլիացիներն են, աւելի շուտ կը մտնեն ծառայող դատակարար անախանքները: Գտնվում էին այնպիսի միմեանց պատահած ժամանակը այս հարցն էին տալիս... «Ինչ ես կարծում, անգլիացիները մեզ համար լաւ կը լինեն: Գտնվում էին այնպիսի անհետաւոր մարդիկ, որ դրական պատասխան էին տալիս. այդպէս մտածողները, ի հարկէ, ղեկավարվում էին այն սկզբ







